

11627

ՅԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊ. ԳՐԱԴԱՐԱՆ
N: 4
ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՅԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊՐԱԿ Դ.

Փոխագրությունը ուղևորվել է ՅԵ. ԼՍ.ԼՍ.ՅԱՆԻ

վերափոխված հրատարակություն

3(075)
9-99

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1927

DEC 2009
25 SEP 2006

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 4 ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԻ № 4

3(075) Այ

9-75 ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

Ա. Ռ. ԵՎ ՏՐ Ա. Կ Ա Ն
ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԻՑ

1003
13357

ՊՐԱԿ Դ.

Փոխադրու քյուն ուսուցիչից ՅԵ. ԼԱԼԱՅԱՆԻ

Բ. ՎԵՐԱՓՈՒՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927

ՋՈՐՐՈՐԴ ՄՍՍ.

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԻՑ

1. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ.

«Մի բարեհաճեք, ձերդ մեծություն, անհանգստանալ, այդ զգվելի ժակ—խուժանները մեզ չեն կարող դիպչել՝ ձեռքերը կարճեն. այս անառակ աշտարակի մեջ դուք միանգամայն ապահով եք»: Այսպես եր հանգստացնում մարաջախտը Ֆրանսիական թագաժառանգի կնոջը: Սա նստած եր իր աղջկա և պալատական կանանց հետ Մոքաղաքի մոտը բարձրացող դղյակի դահլիճում: Այս դահլիճը ցածր եր, կիսամութ, վատ եր լուսավորվում փոքր, նեղ պատուհաններից, բայց այն կիսախավարումն ել կարելի եր հեշտությամբ նկատել տիկիների յերեսին տիրող հուզմունքը: Նրանք, ըստ լերևույթին, քիչ եյին հավատում այդ մարաջախտի հանգստացուցիչ խոսքերին վորն արդեն այնքան եր զառամել, վոր չեր կարող իր փոքրաթիվ պահակախմբով հետ մղել թշնա-

մունն: Ուշիուշով հետևելով քաղաքի կողմից եկող աղմուկին՝ տիկիները շարունակ թարմ և հավաստի տեղեկություններ եյին պահանջում դղյակի դիտարանի վրա կանգնած պահակից, վորը անընդհատ դիտում եր, թե ինչ ե կատարվում քաղաքում:

Յեվ, հիրավի՝ մի սարսափելի բան եր կատարվում Մո ապստական դղյակի սակավաթիվ բնակիչներին և բնակչուհիներին համար:

Միայն մի գետով դղյակից բաժանված քաղաքում շարունակ հավաքվում եյին գյուղացիների նորանոր խմբեր. գալիս եյին կործանելու այն դղյակը, ուր ապաստան եր գտել թագաժառանգի ընտանիքը:

Արդեն յերկու շաբթից ավելի յեր, վոր ամբողջ հյուսիսային Փրանսիայում գյուղացիութունը ապստամբել եր կալվածատերերի դեմ (այդ պատահել եր 1356 թվին). մի գյուղ մշուսի հետևից, զինվելով յեղաններով, կացիներով, դանակներով, մանգաղներով, և ձեռքն ընկնող ամեն բանով, հարձակվում եր՝ կործանելու իր և իր հարեւանի անկուշտ կալվածատերերի դղյակները: Սկզբում ամեն մի գյուղ առանձին եր գործում. հետո ամբողջ ապստամբության առաջնորդ հանդիսացավ մի վոմն Գելիոմ կալ, վորն աշխատում եր անկազմ հրոսակախմբերից կազմել մի ահուե-

լի բանակ՝ ընդհանուր ծրագրով գործելու: Այս խելացի առաջնորդը ըմբռնում եր գյուղացիության սեփական ուժերի անբավարարութունը, ուստի և՛ աջակցութուն եր վորոնում քաղաքի բնակչության դժգոհ տարրերի մեջ: Յեվ, հիրավի, շատ տեղերում ապստամբած գյուղացիներին միանում եյին մյուս դասակարգերից ել մարդիկ: Մսագործները, տակառագործները, ածխագործները, հյուանները, մանրավաճառները շատ անգամ գտնվում եյին այս ապստամբների խմբերում, վորոնք քարուքանդ եյին անում, կողոպտում կալվածատերերի կալվածները, վոչնչացնում նրանց թղթերն ու վավերագրերը: Այսպես քարուքանդ եր արված միջանի տասնյակ դղյակներ: Այժմ հերթը հասել եր Մո դղյակին:

Մո ամրոցը շատ վստահելի ապաստարան եր համարվում, վորովհետև մատչելի չեր միայն քաղաքի կողմից. խոր գետի վրա ձգված կամրջի վրայով. մյուս չերեք կողմերը համարյա անմատչելի եյին: Սակայն ապստամբները՝ թվով 9000 հոգի, վորոշել եյին տիրել դղյակին, գիտենալով, վոր այդտեղ չկա կովող զորք, այլ միայն պահակների մի փոքրիկ խումբ և թագաժառանգի կարգադրությամբ այդտեղ թագ կացած միջանի բարձրաստիճան տիկիները:

Մո քաղաքի բնակիչները սիրով բաց արին

ապստամբների առջև իրենց դռները, քաղաքի փողոցներում դրվեցան սեղաններ, ծածկված սփռոցներով. ուտելիքներով ու պինով: Ամեն կողմից խմբվում էին զինված քաղաքացիներ: Բարձրաստիճան տիկիները դողում էին լսելով գվարճացողների խառնաճաղանճ աղաղակները. նրանք սարսափահար չգիտելին ինչ անեն: Բայց ահա հանկարծ նրանց բաղդից անսպասելի կերպով ոգնության հասան յերկու համարձակ ասպետներ, վորոնք իրենց խմբերով վերադառնում էին հեռավոր արշավանքից: Պաշարվածները խանդավառությամբ ընդունեցին անսպասելի ազատարարներին այն ժամանակ, յերբ քաղաքացիներն ու գյուղացիներն արդեն պատրաստվում էին հարձակվելու: Յեվ հենց այն միջոցին, յերբ սրանք կամուրջի վրա էին, ասպետները, չսպասելով նրանց հարձակման՝ հանկարծակի բաց արին զըդյակի դռները և կատաղությամբ հարձակվեցան պաշարողների վրա: Ժողովրդի համար անսպասելի եր այս հարձակումը. նա ցնցվեց և կանգ առավ: Ասպետներն ոգտվելով այս շփոթությունից առաջացան:

Տեղի ունեցավ արյունահեղ կռիվ: Ժողովրդական զորքի դրությունը չափազանց աննպաստ եր. բոլոր առավելություններն ասպետների կողմն էին: Նեղ կամուրջի վրա պետք է կռվելին՝ կուրծք

կրծքի տված. ինչ կարող էին անել այսպիսի մենամարտի մեջ գյուղացիները, վորոնք պաշտպանված չէին յերկաթե սպառազինությամբ, ինչ կարող էին անել սրանց մահակները, մանգաղները, կացիները և կարճ դանակները սրերի և նիզակների դեմ: Հետի, անուժ, նրանք չկարողացան ընդդիմադրել ձիավոր, ուժեղ ասպետներին, վորոնք վոտից մինչև գլուխ սպառազինված էին յերկաթով, և վորոնց յերկար նիզակները հասնում էին գյուղացիներին ավելի շուտ՝ քան թե սրանք կկարողնային գործադրել իրենց խղճալի զենքերը: Այսպիսով քաղաքացիներն ու գյուղացիները կռվի հենց սկզբից պարտություն կրեցին: Նրանք սարսափահար սկսեցին փախչել, իսկ ազնվականները սլացան նրանց հետևից և սկսեցին անխնա կոտորել, նրանց վրեժխնդրությունը անողորմ եր. նրանք քանդում էին տները, յեկեղեցիները, թալանում էին խռովարարների գույքը:

Շուտով քաղաքն սկսեց վառվել ամեն կողմից, կրակի կարմիր լեզուներն սկսեցին բարձրանալ չորս կողմից, ծուխը կուրացնում եր աչքերը, ամբախտ գոհերի վողբերը խլացնում էին քանդվող տների գոգոցից: Հրդեհը շարունակվեց քաղաքում մի քանի օր, սակայն ասպետների վրեժխնդրությունն այստեղ կանգ չառավ. նրանք հար-

ձակվեցին հարևան գյուղերի վրա, սպանեցին բուրբ պատահողներին, առանց վորոշելու անմեղներին մեղավորներին: Այսպես ընկճվեցան ապստամբները Մո դոյակի մոտ, սակայն դրանով չընկճվեց գյուղացիական ապստամբութիւնը: Ժակերի գլխավոր ուժը Գիլիոմ Կալի առաջնորդութեամբ մնաց անխախտ և նույնիսկ ավելացավ: Այդ գյուղացիներն այնքան բազմաթիւ էին, վոր իրենց անպարտելի էին համարում: Նրանց վրա յեկան ապստանների գործերը թագավոր Կարլոս Նավարացու առաջնորդութեամբ: Հեռատես Գիլիոմ Կալը սաստիկ համոզում էր իրեններին փոքր ինչ նահանջել, և թագնվել Փարիզի պատերի տակ, քանի վոր այդ մայրաքաղաքը այդ ժամանակ թշնամացել էր թագավորի և ազնվականութեան հետ և պատրաստ էր ոգնելու գյուղացիներին, սակայն Կալի առաջարկը մերժվեց:

Գյուղացիները հույսը դրել էին իրենց բազմութեան վրա, նահանջի մասին վոչինչ չէին ուզում լսել և հուզված ձայնով բղավում էին, թե իրենք բավական ուժեղ են, և վոչ մի քալ չեն նահանջիլ: Վոչինչ չէր կարելի անել, պետք էր միայն ապստանական գործերի մոտենալիս պատերազմական դիրք բռնել: Շուտով առաջ մղվեցին կառքերը, վոր միմյանց հետ կապված էին յերկաթե շղթաներով. սրանք փոխարինեցւ էին

պատնեշներին, վորոնց միջով ապստանների ձիերը չէին կարող անցնել: Կարլի ապստանները հույս ունեցին, թե հեշտութեամբ կհաղթեն, ինչպես վոր հաղթել էին Մո-ի կովում, սակայն շատ սխալվեցան. Կառքերի անանցանելի պատի միջով նետերի կարկուտ թափվեց նրանց վրա և ստիպեց նրանց նահանջել. այդ միջոցին նրանք դիմեցին ուխտագանցութեան: Նրանք ընդմիջում առաջարկեցին Գիլիոմ Կալին և կանչեցին նրան իրենց բանակը բանակցութեան:

Գյուղացիների առաջնորդը շատ դյուրահավատ գտնվեց, առանց այլևայլութեան գնաց թըշնամու բանակը, ուր նրան ձերբակալեցին: Գյուղացիական գործը կորցնելով իր առաջնորդին՝ գլուխը կորցրեց և ազնվականներից կոտորվեց: Գիլիոմ Կալը գլխատվեց, նրա գլուխը անցկացրին շիկացած յերկաթե ողակ՝ իբրև թագ: Յերկար ծաղրեցին նրան, վորպես գյուղացիների թագավորի և վերջը գլխատեցին: Այսպիսով վերջարվեց գյուղացիական ապստամբութեան:

Հետագայում Ֆրանսիայում նորից ծագեցին գյուղացիական ապստամբութիւններ, կամ ինչպես անվանում էին նրանց՝ ժաբըրի. բայց ամեն անգամ հաղթութիւնը մնում էր ազնվականութեան և ազնվական կառավարութեան կողմը:

2. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այս տեղի ունեցավ 1381 թվին հունիսի 15-ի կեսորին, Անգլիայի մայրաքաղաք Լոնդոնի ծայրամասում, քաղաքային ընդարձակ հրապարակում, ուր սովորաբար ձիեր էյին ծախում: Հավաքվել էր մի անագին բազմութուն, 15—20 հազար մարդ: Այդ ուրը տոնավաճառի որ չէր, յեթե լիներ ել տոնավաճառի համար այդ ամբոխը շատ-շատ էր և ձիեր ել քիչ կային—ընդամենը 2—3 տասնյակ, բացի դրանից՝ այդ ամբոխի մեջ քաղաքացիներ համարյա չկային, բոլորը գյուղացիներ էյին: Հրապարակի վրա հավաքված մարդիկ կրում էյին զանազան զենքեր. նետ աղեղներ, նիզակներ, թրեր և նույնիսկ լեղաններ, կացիներ ու ծանր մահակներ: Մեծ խռովութուն էր տիրում հրապարակում: Մարդիկ խումբ-խումբ հավաքված ուրախ-ուրախ խոսում էյին: Այս ու այն կողմում լավում էյին աղաղակներ ու ծիծաղի քրքիշներ:

— Անցյալ որը Ջոն Բուլը պատմում էր,—ասում էր մի խմբում կանգնած մի հաղթանդամ լերիտասարդ՝ լեղանը ձեռին և կացինը գոտում,—չերբ Ադամը փորում էր հողը և Յեվան մանում մանածը այն ժամանակ ով էր աղան:

— Թող մեր վոգորմած կոմսերից և պարոն-

ներից մինը բարեհաճի պատասխանել այս հարցերին,—ավելացրեց նա բարձր քրքշալով:

— Յեվ այդ, ինչպես ասում են, ուղղակի տվել է յերեսներին,—արտահայտվեց լսողներից մինը:—Ջոնը խելացի մարդ է, նա ամեն ինչ բացատրում է ինչպես հարկն է: Սկզբում ասում է, բոլոր մարդիկ հավասար են յեղել, այսպես են դուրս յեկել բնության գրկից: Հետագայում անպիտան մարդիկ անարդար կերպով նեղել են իրենց մոտիկներին, վորից և առաջ է յեկել ճորտութունը: Յեթե բնությունը ինքը ուղենար ճորտեր ստեղծել, հենց աշխարհի սկզբից կվորոշեր, թե ով պիտի լինի ճորտ և ով տեր: Այժմ արդեն հասել է ժամը դեն շարտելու յերկարատև ստրկության լուծը և ստանալու վաղուց ցանկալի ազատութունը:

— Յես կարծում եմ, ասաց շիկահեր յերիտասարդը,—վոր Ջոնին դիվանապետ պետք է դարձնել:

Այժմյան դիվանապետը ժողովրդի և թագավորության դավաճանն է և պետք է անմիջապես գլխատել նրան:

— Ճիշտ է, բղավեցին բոլորը, վաղուց պետք էր այդպես անել, այդպես ել կանենք:

Մի ուրիշ խմբում ել ուրիշ խոսակցութուն էր տիրում:

— Շատ յերկամր պետք է քաջ գանք այստեղ, —
անհամբերությամբ հարցրեց մի դեռատի, նիհար,
գունատ մարդ, ուրախությունից փայլող աչքե-
րով: — Ժամանակն է վոր նորին մեծությունը
շտապի և մեզ չստիպի սպասել նրա վողորմա-
ծությանը յերկու ժամից ի վեր: Ես ի՞նչի չի
գալիս:

— Միքիչ սպասիր, սանիկս, կգա—չի կարող
չգալ, նա յերգվել է Ուատ Տայլերին, վոր կգա
այսոր մեզ մոտ և կկատարի մեր բոլոր արգա-
րացի պահանջները, էսկ Տայլերի հետ ինքդ ել
գիտես, վոր հանաք անելը հեշտ չէ:

Հենց այդ միջոցին բոլորի գլուխները դարձան
հրապարակի այն կողմը, ուր ամբոխից փոքր ինչ
հեռու գտնվում էր լավ զինված ձիավորների մի
խումբ: Այս խմբի առջև գեղեցիկ, սևաթույր
ձիու վրա նստած էր թիկնավետ, միջահասակ
մի մարդ, կարճ սև մորուքով և արտահայտիչ,
թուխ դեմքով: Նրա ամբողջ կազմվածքը, սուր,
թափանցիկ հայացքը, ցույց ելին տալիս, վոր
հաստատ բնավորության տեր է և սովոր հրա-
մաններ արձակելու: Նրա ամբողջ սպառազինու-
թյունը կազմում էր միայն մի փոքրիկ դաշուհն:
Սա Ուատ Տայլերն էր, ապստամբած գյուղա-
ցիների առաջնորդը, վոր յեկել էր Լոնդոն՝ պա-
հանջելու թագավորից ազատություն և իրավունք:

Տայլերը նայում էր այն կողմը, ուր կանգնած
էր հիվանդանոցի ահագին շենքը: Անհամբերու-
թյունը և սրտեղդությունը պարզ նկատվում էին
Տայլերի չերեսին, և յերբեմնապես բարկության
կրակը առկայծվում էր նրա խիստ, սև աչքե-
րում: Բայց ահա հիվանդանոցի կողմից յերևաց
մի ձիավոր, մոտ վազեց Տայլերին և միջանի
խոսք ասաց: Տայլերը ուղղվեց թամբի վրա, արագ
դարձավ դեպի իր ընկերները և մի ինչ վոր հրա-
ման տվեց: Իսկույն նրան շրջապատող բոլոր
ձիավորները ցրվեցան հրապարակի վրա և շատ
տեղերում լսվեցան «ուզմական դիրք բռնեք»
հրամանը:

Բյուրավոր ամբոխը ծփաց, վորպես վտանգ-
ված մրջնանոց, խոսակցությունները դադարեցան
և միջանի ըոպելից հետո հրապարակի խառնի-
ճաղանճ ամբոխի փոխարեն, յերեսները դեպի
հիվանդանոցը դարձրած կանգնած էր ուղիղ, խիստ
շարքերով, մի ահագին զորագունտ, հուժկու և
լուռ, իսկ նրա վերևը յեղանների և նիզակների
մի ահագին շարք: Սրանց առջև գտնվում էր
Ուատ Տայլերը՝ շրջապատված իր ոգնականներով:

Միքիչ ել անցավ և հրապարակի վրա քաղաքի
կողմից յերևաց մի խումբ ձիավորներ, առջևից
գնում էր մի դեռահաս ձիավոր, համարյա պա-
տանի — Ռիչարդ թագավորը բարոնների, ասպետ-

ների ուղեկցութեամբ, իսկ հետևից Լոնդոնի քաղաքացիների զինված պահակը: Յեկոդները կանգնեցին ապստամբներից բավական հեռու: Թագավորական ասպետներից մինը, Ջոն Նյուտոնը, մի ասպետ ուղարկեց ռազմական կարգով կանգնած գյուղացիների մոտ, հրավիրելու նրանց առաջնորդ Տայլերին թագավորի մոտ բանակցութեան: Տայլերն անմիջապես հետևեց ասպետին միաջնակ, առանց վորևե ուղեկցի, զինված միաջն մի դաշուհնով: Գնաց զեկուցելու թագավորին գյուղացիների ցանկութունը:

Թագավորից 3—4 քայլ հեռու Տայլերը կանգնեցրեց իր ձին:

Առաջինը խոսեց թագավորը. Նա դժգուլն երևաւ և ձայնն ել միքիչ դողում եր:

Ահա յես լեկա ձեզ մոտ: Յերեկ յես հայտարարեցի Մայլենդում (Լոնդոնի մոտ) հավաքված ձեր յեղբայրներին, վոր համաձայն եմ կատարելու նրանց խնդիրը, այսինքն անգլիական թագավորութեան սահմաններում բոլորը պետք է ազատվեն ճորտութունից, այնպես վոր այլևս վոչ մի ճորտ չի լինելու, իմ բոլոր հպատակների ապստամբութեան միջոցին կատարած բոլոր հանցանքները՝ սպանութունները, թալանը ներում եմ և բոլորին շնորհվում է թագավորական ընդհանուր խաղաղութունը: Իմ բոլոր հպա-

տակները իրավունք են ստանում զնելու և ծախելու բոլոր քաղաքներում, ավաններում և գյուղերում: Վերջապես հողը, վորից առաջները գյուղացիները ոգավում եյին անձնական ծառայութուններով, այսուհետև միայն փողով պետք է տրվի և այն ել աղբը չորս պենսից վոչ ավելի: Ահա այսպիսի իրավունքներ շնորհում եմ ձեզ, վորի մասին կհրատարակվեն իմ թագավորական կնքով կնքված հրովարտակներ: Ել լինչ եք ցանկանում:

Տայլերը բարձր և վորոշ պատասխանեց:

Մենք ցանկանում ենք դարձյալ, վոր տերերին վերապահված անտառների և ջրերի սահմանները բացվեն բոլորի առջև, այնպես վոր հարուստն ել, աղքատն ել կարողանա ամբողջ թագավորութեան մեջ ազատորեն ձուկ բռնել բոլոր լճերում ու գետերում, գազաններ վորսալ բոլոր անտառներում և հետո՝ մինչև այժմս թագավորը գտնվում եր վատ խորհրդատուների ազդեցութեան տակ, վորից հասարակ ժողովուրդը սաստիկ ճնշվում եր, այժմս մենք ինքներս ենք ցանկանում առաջնորդել թագավորին ընդհանուրի բարորութեան համար:

Արյունը լցվեց թագավորի յերեսին, բաց հետո նա նորից սփրթնեց, լերևում եր վոր բարկութունն ու յերկյուղը կոպում եյին նրա հո-

գուս մեջ և չեր կարողանում վարողել, թե ինչպես և ինչ պատասխանի:

Պատասխան չստանալով, Տայլերը բռնկվեց, նրա աչքերը խիստ փայլեցին: Նա մոտեցավ թագավորին և շեշտակի նայելով նրան՝ ասաց. «Յես սպասում եմ քո խոսքին, թագավոր, վոր հաղորդեմ ժողովրդին»: Թագավորը շարունակում եր լռել:

Տայլերը սաստիկ մոտեցավ թագավորին և բռնեց նրա ձեռքը սանձից:

Այստեղ տեղի ունեցավ մի ինչ-վոր անսպասելի բան: Թագավորի կողքին կանգնած Լոդոնի քաղաքագլուխ Ուելվորսը, մտածելով, վոր թագավորին մահ ե սպառնում, հանեց դաշուհնր և խփեց Տայլերի վզին: Տայլերը ընկավ:

Նրան շրջապատեցին խիտ ցանցով թագավորական զինվորները և սպանեցին իրենց թրերի հարվածներով: Այս բոլորը կատարվեց շատ արագ:

Ապստամբները միանգամից չնկատեցին թե ինչ պատահեց իրենց առաջնորդին, չնկատեցին նաև թե ինչպես Տայլերին վտաններից ու ձեռներից քաշելով տարան մոտակա լեկեղեցին: Բայց վերջապես ամեն ինչ նրանց պարզվեց: Ապստամբների շարքերը հանկարծ ցնցվեցին և տարածվեց անեղ տրտուհի, բոլորը բարձրացրին իրենց աղեղները պատրաստվելով արձակել թա-

գավորի և նրա հետևորդների վրա հազարավոր նետեր, վրեժխնդիր լինել իրենց առաջնորդի մահվան: Սակայն այդ վայրկյանին թագավորը քշեց իր ձին և սլացավ, բայց վոչ թե անեղ ամբոխից, այլ ուղղակի դեպի նա:

«Յես ձեր առաջնորդն եմ, լես ձեր թագավորն եմ, բացականչեց Ռիչարդը, ով իմ կողմն ե՝ թող հետևի ինձ դեպի դաշտը, այնտեղ կստանա ինչ վոր ցանկանում ես»:

Թագավորի անսպասելի յերևան գալը, նրա խիզախությունը և խոսքերի վճռական յեղանակն ամբոխի վրա խիստ ազդեցություն գործեցին: Յերկար դառերի ընթացքում ժողովրդի մեջ արմատացած հավատը դեպի թագավորը՝ վորպես աստծո ոժյալի, իր ազդեցությունն ունեցավ և ամբողջ շմամբ ամբոխը, վորպես մի մարդ հետևեց թագավորին դեպի դաշտ: Ճիշտ ե, մեկ-մեկ լսվում եյին ձայներ, վոր, նախքան թագավորի հետ բանակցելը, պետք ե պահանջել նրանից հանձնել ժողովրդի դատաստանին Տայլերի սպանողին՝ Լոդոնի քաղաքագլուխ Ուելվորսին, սակայն մինչ այդ, Ուելվորսն արդեն Լոնդոնում եր և մեծ հուզվունք եր բարձրացրել, թե թագավորը վտանգի մեջ ե, պետք ե ազատել նրան: Իսկուհյ կազմվեց Լոնդոնի բուրժուաններից լավ զինված մի խումբ և լեկավ թագավորին ոգնության:

1003
13357

Ապստամբների մեջ չգտնվեց մինը, վոր կարողանար Տայլերին փոխարինել, իսկ թագավորին ոգնութչան հասնողների յերևալը մեծ խռովություն ձգեց նրանց շարքերի մեջ: Այս բոլորը նրանց ավելի զինող դարձրին: Իր կողմից թագավորն ել անվտանգ չհամարեց մի անգամից սանձը քաշել և հրամայեց տալ ապստամբներին ազատագրական հրովարտակներ, առանց այն հավելումների վոր խնդրում եր Տայլերը: Հետո թագավորը հենց այստեղ դաշտի մեջ ասպետ ձեռնադրեց քաղաքագլուխ Ուելվորսին ինչպես և Լոնդոնի վաճառականներից իր միջանի ազեցիկ և հարուստ կողմնակիցներին:

Սրանից հետո թագավորը և նրա հետ յեղողները բոլորը միասին մեծ խրախճանքով վերադարձան Լոնդոն:

Մայրաքաղաք հասնելով թագավորը իսկույն մի խիստ հրաման արձակեց:

«Ովքեր Լոնդոնի բնակիչներ չեն և կամ մինչև մի ամբողջ տարի չեն ապրել այս մայրաքաղաքում, անմիջապես պետք ե թողնեն քաղաքը, այլապես կգլխատվեն անհնազանդութչան համար»: Ապստամբներին տվին թագավորական հրովարտակ և անագին դժվարութչամբ ցրեցին յերկրի խորքերը:

Գյուղացիք թագավորական հրովարտակները

ձեռքներին տուն վերադառնալով, ամենայն պարզամտութչամբ հավատում եյին, թե ձեռք են բերել ազատութչուն և վորոշ իրավունքներ:

Սակայն շուտով իրենց կաշու վրա զգացին, թե ինչ արժեք են ներկայացնում թագավորի հանդիսավոր խոստումները և արքունական կնիքով կնքված ազատարար հրովարտակները:

Հենց վոր հաջողվեց մաքրել Լոնդոնը ապստամբներից, իսկույն ցրվեցին ամեն մի տեղ ուրիշ հրովարտակներ, թե «ով սիրում ե թագավորին և գնահատում ե նրա պատիվը՝ թող ձին նստի և սպառապիլնված գա մայրաքաղաք»:

Յերեք որից հետո Լոնդոնում հավաքվեց 40,000 շատ լավ զինված ասպետներ, ձիավոր բարոններ, կալվածատերեր իրենց ծառաներով: Կազմվեց դատավորների մի հանձնախումբ լորդ քաղաքագլխի նախագահութչամբ, վորն սկսեց դատել կառավարութչան ձեռքն ընկած խռովարարներին: Միքիչ հետո այսպիսի հանձնաժողովներ սկսեցին կազմակերպվել զանազան տեղերում պետական պաշտոնյաներից և կալվածատերերից: Թափվեցան արյան գետեր, յերկիրը ծածկվեց կախադաններով, վորոնցից չուրաքանչյուրի վրա ձոճվում եյին 9—10 դիակներ:

Թագավորի ազատարար հրովարտակների մասին այլևս խոսք անգամ չեր լինում:

3. ԱՏԵՓԱՆ ՌԱԶԻՆ.

Համբերութիւնը կտրվեց:—1670 թ. Ռուսաստանում Ալեքսանդր Միխայլովիչ ցարի ժամանակ կառավարութեան համար ահռելի դեպքեր տեղի ունեցան: Ռուսաստանի ամբողջ հարավարևելյան կեսը բռնկվեց ժողովրդական ապստամբութեամբ:

Գյուղից գյուղ, քաղաքից քաղաք թափառում էին գյուղացիների և կոզակները հրոսակախմբեր, դատում և պատժում էին կալվածատերերին ու քաղաքապետներին: Այրվում էին կալվածները, խփվում էին զանգերը, ժողովուրդը զինվում էր և հայտարարում՝ վերջ հին ճորտական դրութեան: Բոլորը ցանկանում էին «ազատ կոզակներ լինել»: Սկսվեցին այսպես ասած «արտոնյալ տարիներ» — առանց հարկերի, առանց սուրբի, առանց կառավարչի: Գյուղացիները դադարեցին վճարել հարկերն ու պարտքերը, և վորպեսզի ապագայում վոչ վոք չմտածի պահանջել ապահովները կամ պարտքերը, ապստամբված գյուղացիները հարձակվում էին արևի վեբրի և գրասենյակների վրա, վառում էին վավերագրերը և դատարանական գործերը: Կառավարութեանը չսպասելով հարձակման, ուղարկում էր զորավարներին ջնջելու անհնազանդներին:

Մոր արմատացել էին ապստամբության պատճառները:

XVII դարի սկզբում Մոսկվայի թագավորը համախմբեց Ռուսաստանի բազմաթիվ հողատեր իշխաններին և կազմեց Մոսկովյան մեծ թագավորութունը: Սակայն այս քաղաքական միացումը գյուղացիութեանը չավեց ազատութուններ, չթեթևացրեց նրա դրութունը: Պաշտոնյա կալվածատերերն ու ազնվականները նեցուկ էին Մոսկովյան թագավորի գահին, ուստի և նրանց բմահաճույքը դեպի գյուղացիները վոչ մի բանով չէր սանձահարվում:

Կալվածատերերի ծանր հարկերից, նրանց ծեծից, բմահաճույքներից և տանջանքներից ժողովուրդը փախչում էր:

Դեռ XVII դարի սկզբում ամբողջ շրջաններ դատարկվել էին: Հետո փախուստը ել ավելի շատացավ: Փախչում էին ճորտերը, փախչում էին կալվածատիրական գյուղացիները և զինվորները: Այս փախուստների առաջն առնելու համար պետութունը միջոցներ էր ձեռք առնում. նա ամեն կողմ լրտեսներ էր ուղարկում, վորոնք ամեն կերպ աշխատում էին բռնել փախչողներին, բռնվածներին մտրակներով ծեծում էին և վերաբնակեցնում իրենց նախկին տեղերում:

Այս խիստ միջոցներն այնուամենայնիվ չկա-
կողացան զսպել անբավականներին: Մի քանիս-
ները հայտարարում էյին, թե չեն հիշում վոր
կալվածատերերին են պատկանել, մյուսները
թագ էյին կենում և կազմում ավազակային խում-
բեր:

Վոլգայի խիտ անտառները և Դոնի ընդարձակ
դաշտերը դառնում էյին հուսալի ապաստաններ
այն բոլորի համար, վորոնք նեղված էյին կյան-
քից և Ռուսաստանի կարգերից: Հենց այստեղ
կողակների մեջ, ազատ Դոնի և ընդարձակ Վոլ-
գայի վրա 250 տարի առաջ տեղի ունեցավ այն
շարժումը, վոր պատմության մեջ կոչվում է
Ստեփան Ռազինի ապստամբություն:

Ռազինի վիճակը.. Ստեփան Տիմաֆեյեվիչը Դո-
նի կողակներից էր: 1667 թ. նա 40 տարեկան
էր: Ռազինը միջահասակ, ամուր, հսկայական
կազմվածքով մարդ էր: Նա ապշեցնում էր բոլո-
րին իր անվախ համարձակությամբ. վոչ մի վտանգ
չկարողացավ նրան վախեցնել և կանգնեցնել.
զարմանալի տոկունությամբ նա տարավ պատե-
րազմների ամեն տեսակ դժվարություններն ու
աղետները:

Ստեփանի առաջին հարձակումները կողակ ա-
վազակախմբերի և խուժանի հետ միասին Դոնի
ափերին պսակվեցան մեծ հաջողությամբ և մեծ

փառքի արժանացրին վորպես քաջ, անհաղթելի
ատամանի. շնորհիվ այդ փառքի նրա խուժքը
որեց որ աճեց և հոսով 2000 մարդու: Ստե-
փանը իր քաջությամբ այնպիսի մեծ ազդեցու-
թյուն էր գործում յուր ընկերների վրա, վոր
վերջիններս պատրաստ էյին նրա մի խոսքով
«Չուրն ու կրակն» ընկնելու: Իգուր չեր, վոր
նրա մասին տարածվել էր այն կարծիքը, թե
նա կախարդ է, թե նա այնպիսի կախարդական
ույժ ունի, վոր գնդակն անգամ չի վնասի: Ռա-
զինի և նրա քաջերի մասին ժողովրդի մեջ հա-
ռաջացել էյին բազմաթիվ չերգեր, վորոնք յեր-
կար ժամանակ յերգվում էյին Վոլգայի ափերին:

Սարատովից փոքր ինչ ներքև կան մի քանի
ապառաժներ, սահման—վորոշ վայրեր, վորոնք
այժմս ել կոչվում են «Ստենկա Ռազինի ժալ-
ուեր»: Այս լեռների գագաթներից ատամանը դի-
տում էր Վոլգայի վրա լողացող նավերը և կո-
ղոպտում նրանց:

Ռազինի ավազակային հարձակումների լուրը
հասավ և Մոսկվայի կառավարության: 1667 թվի
սկզբին Մոսկվայից գրում էյին Աստրախանի
քաղաքապետին «Դոնում հավաքվում են բազմա-
թիվ կողակներ և կամենում են գնալ կողոպտե-
լու Վոլգայի նավերը, վերցնել Ֆարիցինը և այն-
տեղ հաստատվել»:

Ապստամբութուն. Հիրավի Ռազինը յուր խրմբով շուտով գգաց վոր Դոնի ափերը նեղ են իրենց համար: Այդ ժամանակ նրա գլխում ծագեց մի համարձակ, յայն ծրագիր. յուր կողակների հետ դուրս գալ Վոլգայի ափերը, վերցնել Ցարիցին և Աստրախան քաղաքները և այսպիսով հասնել Կասպից ծովին: Այնտեղ արդեն մեծ տարածութուններ կան, ու կարելի յե սփռվել, կարելի յե կողոպտել ծովի վրայի նավերը, հարձակվել պարսկական և բուխարական ափերի վրա, թույլ չտալ ացնելու և ցարական նավերին, վորոնք իջնում եյին Վոլգայի վրայով: Իսկ Աստրախանից, մտածում եր Ստեփանը, հաջողության դեպքում կարելի յե բարձրանալ Վոլգայով դեպի բարձրում գտնված քաղաքները, գոգոել այնտեղ հասարակ ժողովուրդը, իսկ հետո Մոսկվան ել հեռու չե...

Սակայն իր այս մտադրության իրագործման համար հարկավոր եր ավելի մեծ ամբողջ հավաքել և լրացնել յուր ավազակախմբի նոսրացած շարքերը: Այս հեշտ եր անել, պետք եր միայն ավելի մեծ խուժան վտաքի կանգնեցնել իշխանների և զորապետների դեմ, իսկ այսպիսի խուժան վաղուց արդեն կար և պատրաստվում եր:

1670 թ. ապրիլին Ստեփանի առաջնորդությամբ հավաքվեցավ 7000 մարդ. Ստեփանը վո-

րոշեց գնալ ուղղակի Ցարիցինի վրա՝ տիրելու: Ճանապարհին դեռ Դոնում միացավ նրան—Վոլգայի նշանավոր յավազակ Վասկա Ուսը յուր խրմբով: Ռազինը մոտեցավ Ցարիցինին և շրջապատեց յերկու կողմից. գետի կողմից նավերով և ցամաքի՝ զորքով: Ցարիցինի զորապետ Տիմաֆեյ Տուրգենեվը փորձեց պաշտպանվել. հրամայեց փակել քաղաքի դռները և լցնել թևդանոթները: Սակայն մի բանիքաղաքացիներ, վոր կաշառված եյին Ռազինի կողմից՝ ներս թողին կողակներին: Այսպիսով քաղաքը շատ հեշտությամբ առնվեց: Այս ժամանակ Ռազինին իմացրին, վոր բարձրից Վոլգայի վրայով գալիս ե իր վրա Մոսկվայի մի զորախումբ 1000 հոգուց բաղկացած, իսկ ներքեից, Աստրախանից գալիս ե զորապետ իշխան Լվովը 3000 աղեղնավորներով:

Ռազինը չվախեցավ. իրա ուժը ավելի մեծ եր:

Մոսկվայի զորքը արդեն կանգնած եր Ցարիցինից 7 վերստ հեռու. Ռազինը արագությամբ և անսպասելի կերպով հարձակվեց նրա վրա յերկու կողմից, ափից և նավերի վրայից. 500 աղեղնավոր սպանվեցան, առաջնորդներին կամ ձգում եյին գետը կամ կախում եյին: Մընացածներին Ստեփանը պահեց յուր մոտ և թիավար նշանակեց նավերում:

Բայց հետո գալիս եր իշխան Լվովի զորքը.

չսպասելով թշնամիներին Ստեփանը ընդառաջ
գնաց նրանց և հանդիպեց սև քարափի մոտ:
Այստեղ հաջողութունը ավելի հեշտ ձեռք բեր-
վեց. Ռազինը չուր նավերով դեռ չեր մոտեցել
նրանց, յերբ աղեղնավորները կանչեցին.

«Վողջույն քեզ հայրիկ, հաղթողդ մեր բոլոր
կեղեքիչներին»:

Բոլորն անձնատուր յեղան առանց կովի. Առաջ-
նորդներին կապկպեցին և հանձնեցին ատամա-
նին, վորը հանձնեց աղեղնավորներին դատը կրտ-
բելու, իսկ նրանք բոլորին կոտորեցին:

Ինչ Յարիցինու մ Ռազինին հայտնեցին, վոր
Աստրախանի քաղաքացիները նրա կողմն են և
սպասում են նրան, դժվար չի լինի առնել քա-
ղաքը: Այս պատճառով Ստեփանը վորոշեց նախ
ուղեվորվել այնտեղ, իսկ բարձրի քաղաքները
ուղարկեց իրեն մարդկանց նամակներով կոչ
անելով ժողովրդին ապստամբվելու:

Ռազինը ոգտվելով գիշերվա մթութունից,
իր հրոսակախմբի մի մասով անցավ քաղաքի
շուրջը և բարձրացավ պարսպի վրա. արվարձա-
նի բնակիչները ու աղեղնավորները ձեռք ելին
մեկնում պաշարողներին՝ ոգնելով նրանց բար-
ձրանալ պարսպի վրա: Թնդաց թնդանոթների
հինգ արձակում—վոր նախապես վորոշված էր
իբրև ազդանշան՝ քաղաքը հանձնելու:

Աղեղնավորներն ու արվարձանների բնակիչ-
ները հարձակվեցան կոտորելու կառավարիչներին,
գրագիրներին, ազնվականներին, իշխանների վոր-
դիներին: Նրանց ոգնում էին կողակները, վոր
արդեն մտել էին քաղաքը:

Ռազինը յերեք շաբաթ քեֆ արեց Աստրախա-
նում:

Ամբոխը սոսկալի կերպով կատաղած, ինքն
եր պահաջում Ռազինից նոր մահապատիժներ
տալ բարձր դասից կենդանի մնացածներին: Ամեն
որ ատամանը նստում էր միտրապպոլիտի ապա-
րանքի դռների առջև հատուկ պատրաստված
տեղը, նրա մոտ բերում էին մահվան դատա-
պարտվածներին: Բավական էր, վոր Ստեփանը
ձեռքով նշան տար՝ անմիջապես տանում էին
մինին՝ վառելու, մյուսի ձեռքը կտրելու, յեր-
բորդին գլխատելու և այլն: Իսկ յեթե, պատահ-
մամբ խելքին փչեր վողորմիլ մի այնպիսի մար-
դու, վորն արդեն պատրաստվել էր մեռնելու,
այդպիսի բաղդին արժանացողին կապանքները
արձակվում էին և ազատ թողնվում: Ստեփանը
զորապետի գրասենյակում վառեց բոլոր թղթերը
և պարծենում էր, թե մի որ էլ «բարձրի»,
այսինքն արքունի պալատի թղթերը պիտի վառի:

Ռազինը հուլիսի վերջին մեկնեց Աստրախա-
նից Վոլգայով դեպի վեր, նրա հետ գնում էր

8000 զինվոր 200 նավերով, բացի դրանից 2000 ձիավոր ել ցամաքով: Վորջան նա հառաջանում եր դեպի վեր Վոլգայով, այնքան նրա զորքը ավելանալով ավելանում եր: Վոլգայի գետափնյա քաղաքներից լերկուսը, Սարատովը և Սամարան, յենթարկվեցան կազակների կողոպտման: Նրանց հետ վարվեցին ճիշտ այնպես, ինչպես Աստրախանի հետ: Մինչ այս, Ստեփանի պատվիրակները նրա նամակներով ցրվեցան ամբողջ պետութայան մեջ, մտան նույնիսկ Մոսկվա, հյուսիսային քաղաքները, յեղան նույնիսկ Արխանգելսկուս: Այս նամակներով Ստեփանը կոչ էր անում բոլորին ոգնել իրեն, ընդեմ ընդհանուր թշնամիների—իշխանների, զորավարների և հրամանատարների: Սոստանում եր բոլորին հարստություն և ազատություն, հաստատելու ամբողջ Ռուսաստանում կողակների տիրապետություն և ընդհանուր հավասարություն:

Ամեն տեղ սիրով լսում և կատարում էին Ռազինի կոչերը և խոսքից շուտով գործի էին անցնում: Ամեն տեղ շարժվեցին գյուղացիները, ճորտերը, աղեղնավորները և արհեստավորները. սկսեցին հրդեհել ազնվականների և իշխանների կալվածքները, թալանել հարուստ մարդկանց. քաղաքներում հարձակվում էին զորապետների գրասենյակների վրա, ծեծում էին պաշտոնյա-

ներին, այրում էին վավերագրերը: Ժողովըրդական կիրքը բորբոքվել եր. գյուղացիները չէին բավականանում կալվածատերերին, նրանց կանանց ու յերեխաներին սպանելով, այլև հաճախ նրանց տանջանքների էին յենթարկում: Ապստամբութայն բոցը բռնկեց անագին տարածություն, ամբողջ ստորին ու միջին Վոլգան, և ապա արևելք ու արևմուտք (այժմյան Սարատովի, Սամարայի, Սիմբիրսկի, Կազանի, Նիժնովոլգորոդի նահանգները):

Ապստամբվեցան, բացի ուս գյուղացիներից, նաև այս կողմերում ապրող «ալլագիները»—չերեմիսները, մարդկաները, չուվաշները, և կալմիկները: Նրանք դժգոհ էին Մոսկվայի կառավարութայն դրած ծանր հարկերից և պաշտոնյաների ճնշումից:

Հայտնի չէ, թե վորջան պիտի ընդլայնվեր ու տարածվեր այս շարժումը, յեթե վոր Ռազինի հաջողությունը չվերջանար Սիմբիրսկի մոտ: Մոտ մի ամիս նա մնաց այնտեղ, տիրեց արվարձաններին, բայց չկարողացավ առնել քաղաքի միջնաբերդը: Այնտեղ ամուր նստել եր Միլոսլավսկի զորապետը լավ վարժված զորքի փոքրիկ զորամասով և հաջողութայամբ հետ եր մղում Ռազինի հարձակումները: Պաշարվածները արդեն թուլացել էին (Ղուրը չէր բավականացնում), յերբ

Կազանից ոգնութեան հասավ (1670 թ. հոկտեմբերին) Բարձատինսկին իր զորքերով: Տեղի ունեցավ տաք կռիվ, գյուղացիների և կոզակները անկանոն մասսաները չկարողացան դիմադրել ցարական կանոնավոր զորքերի գրոհին և տեղի տվին. ինքը Ռազինը վերավորվեց վոտից և գլխից, գլխերը նա փախավ կոզակների մի փոքրիկ խմբով, թողնելով գյուղացիներին ու կոզակներին անտանելի դրութեան մեջ:

Առավոտյան Ռազինի կողմնակիցները, լսելով առաջնորդի փախստյան լուրը, սարսափահար դիմեցին դեպի Վոլգայի ափերը, հուսալով նավակներով փախչել ու ազատվել, բայց Բարձատինսկին հրամայեց հետապնդել նրանց և թշվառները ստիպված յեղան ջուրը թափվել և խեղդվել: Մոտ 600 մարդ բռնվեցին ու գլխատվեցին:

Սիմբիրսկի պարտութունից հետո Ստեփան Ռազինի բաղդավոր աստղը խավառեց: Սամարայում և Սարատովում, ուր նա կամենում էր ապաստանել, նրան թույլ չտվին, այն ժամանակ նա փախավ դեպի Դոն: Բայց այնտեղ պետութեանը հավատարիմ մնացած տնտեսասեր ունեւոր կոզակների կուսակցութունը գերակշռեց և, յերբ վոր Ռազինը չերեվաց Դոնում, նրան բռնեցին և շղթայեցին:

Գլխատումն.— Մի հազվադեպ, պարզ և դու-

րալի առավոտ բացվեց Մոսկվայում 1671 թվի հունիսի 4-ին: Կեսորվա մոտ էր: Անամպ լերկնքի վրա կուրացուցիչ կերպով փայլում էր արեգակը, թեթև, զով քամին մեղմացնում էր նրա աչրող ճառագայթները: Քաղաքի փողոցներով անցնում էին ժողովրդի գանազան խմբեր, նրանք բղավում էին և աղակում: Իսկույն կարելի չէր նկատել, վոր այս մեծ քաղաքի սովորական անց ու դարձը չէր, վոր ամբոխին միացնում էր մի ինչ վոր ընդհանուր նպատակ, և վոր նա շարժվում է մի ուղութեամբ: Հիրավի, մոսկվացիք գնում էին դեպի հրապարակներից մեկը: Շուտով այդտեղ հավաքվեց համարյա ամբողջ Մոսկվան: Հարյուրավոր, հազարավոր աչքեր ուշադրութեամբ նայում էին իրենց առջև ընկած ճանապարհին, սպասելով մի ինչվոր բանի:

Մոտ մի ժամ անցավ, և հանկարծ ամբոխի առաջին շարքերից լսվեցին «բերում են, բերում են» աղաղակը:

Ամբոխը խմբվեց, հետին շարքերը ճնշում էին առաջիններին. տեղ-տեղ լսվեցին աղաղակներ.

«Վայ, արորեցիք».— «Ինչ էս հրում, հրեշ»:

«Ջգույշ, յեղբայրներ, զգույշ»:

Ճանապարհի վրա յերևաց մի տարորինակ գնացք. մի մեծ սալլ, վորի վրա ցից կանգնեցրած

եր կախադանը՝ յերկու սյուններ վերևից միացրած գերանով, այս սյունների արանքում կանգնած եր մի մարդ 35 տարեկան, միջահասակ, լայնաթիկունք և լայն կրծքով, շեկ լայն մորուքով և գլխի խճճված գանգուր մազերով. նա առանց գլխարկի լեր և ցնցոտի հագած: Այս մարդու խիստ ջարդված դեմքը այնուամենայնիվ արտահայտում եր ֆիզիքական մեծ ուժ և կարողութուն: Յերկաթե շղթայով նա կապված եր վզից կախադանին, իսկ ձեռները և վոտները շղթաներով ամրացրած եր սայլին: Սայլի յետևից սալթաքելով գնում եր մի ուրիշ մարդ, վզից շղթայով կապված սալի կողքից: Բերում եյին Մոսկվա պատժելու կողակների նշանավոր ատաման և խոռվարար Ստեփան Ռագինին և նրա յեղբայր Ֆրոկային:

— Ճանապարհ: Ճանապարհ տվեք, — գոչեց պահակների ավագը, յերբ վոր գնացքը մոտեցավ ամբոխին:

Ամբոխը լուռ յետ քաշվեց և նրա միջով անցան կալանավորները: Մոսկովցիք հառած աչքերով նայում եյին սայլի վրա կանգնած Ռագինին. մի քանիսները ատելությամբ, մյուսները խղճալով և համակրանքով: Իսկ նա, կանգնած եր անտարբեր և աչքերը խոնարհած, կարծես շուրջը վոչ վոք չկար, կարծես նրա վրա չեյին

հենվում ծանր շղթաները յերբ սայլը փոսերն եր ընկնում:

Ամբոխը առաջնորդեց գնացքին քաղաք մինչև դատարան, ուր տանում եյին այս յերկու կալանավորներին դատելու: Այս դեպքից յերկու որ հետո, 1671 թ. հունիսի 6-ին, Կարմիր հրապարակի վրա տեղի ունեցավ պատիժը և այս առիթով նորից անագին ամբոխ եր հավաքվել: Ստեփանին իր յեղբոր Ֆրոկայի հետ բարձացրին նրանց գլխատման տեղը. բայց այս անգամ նա այլևս այն միևնույն Ստեփան չեր, վորին տեսել եյին մոսկովցիները, յերբ նա մտավ Մոսկվա: Նրա ամբողջ մարմինը ներկայացնում եր մի այլանդակ արյունոտված, ուռած գանգված: Յերկու որ շարունակ դահիճները տանջում եյին նրան բանտում, բայց չկարողացան նրան ստիպել խոսելու. բոլոր տանջանքների ժամանակ, նույնիսկ կրակի վրա պառկած Ստեփան համառաբար լուռ եր: Նա միայն մի անգամ խոսեց, յերբ դահիճները դադար տվին նրան ուսկոսեցին տանջել Ֆրոկին, վորը ցավից սկսել եր բղավել:

— Ախ դու թուլամորթ, ասաց Ստեփանը: Հիշիր մեր նախկին կյանքը. մենք փառքով ու պատվով ապրեցինք, հրամայեցինք հազարավոր մարդկանց, այժմս ել պետք ե քաջությամբ տանենք դժբախտությունը: Միթե դա ցավ ե պատճառ-

ուում քեզ, կարծես պառավ ե ասեղով ծակում:

Այդպես դահիճները Ստենկայից վոչինչ չկարողացան իմանալ և իշխանները վորոշեցին գլխատել յերկու յեղբայրներին: Քարտուղարը կարդաց յերկար գատավճիւղը, վորտեղ հիշված եր գատապարտվածների բոլոր հանցանքները: Ստեփանը հանգիստ լսեց բոլորը: Դահիճը բռնեց նրա թևից, Ստեփանը դարձավ դեպի յեկեղեցին, խաչակնքեց, խոնարհվեց դեպի չորս կողմը և ասաց. «ներեցեք»:

Նրան գրին յերկու տախտակների մեջ, դահիճը սկզբում կտրեց նրս աջ ձեռքը արժուկից, հետո ձախ վոտը ծնկից: Ստենկան ցույց չտվեց անգամ թե ցավ ե զգում:

Ֆրոկան տեսնելով յեղբոր տանջանքները, վոր պիտին սպասում եր և իրեն, ալլալվեց և գոչեց.

— Յես գիտեմ պետական մի գաղտնիք:

Այս նշանակում եր, վոր նա կամենում եր մի այնպիսի գաղտնիք հայտնել, վոր սկզբում չեր ուզում ասել:

— Լռի՛ր, շուն, ասաց Ստեփանը: Այդ յեղավ նրա վերջին խոսքը:

Դահիճը գլխատեց նրան:

Նրա իրանը կտրատեցին և ցցերի վրա անցկացրին: Գլուխը նույնպես ցցի վրա անցկացրին, փորոտիքը շներին ձգեցին:

Ֆրոկայի գլխատումը հետաձգեցին, վորովհետև նա խոստացավ ցույց տալ մի գանձի տեղ, վորը սակայն չգտնվեց: Ֆրոկային դատապարտեցին մշտնջենական բանտարկության:

4. ՊՈՒԳԱԶՈՎԼՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ.

Այս ապստամբութունը տարածվեց սրանից մեկ ու կես դար առաջ. Անդրվոլգյան ամբողջ շրջանում, Ուրալյան և Կիրգիզյան դաշտերում, Ուրալի հանքային գործարաններում, Կամա գետի այն կողմը և Ուֆայի, Կազանի, Պենզենի, Սիբիրի, Տամբովի ու Սարատովի նահանգներում:

Պուգաչովը իրեն անվանելով Պետրոս III, կոչ արեց ժողովրդին վոչնչացնել ճորտութունը և վրեժ առնել իրենց նեղող կալվածատերերից: Նա իր մի հրովարտակի մեջ գրում եր այսպես. «Այս մեր անվանական հրովարտակով իրավունք ենք շնորհում մինչև այժմս կալվածատերերի հպատակության տակ գտնված բոլոր գյուղացիներին՝ հավատարիմ հպատակ դառնալ մեր թագին և վարձատրում ենք ձեզ պարգևներով հին կրոնը դավանելու և միրուք թողնելու իրավունքով, նվիրում ենք անձնական և այլ զբամական տուրքերը, վարձատրում ենք վարելահողերով, արոտատեղիներով, անտառներով, ձկնորսության իրավունքով, առանց վորևե հարկի ու տուրքի,

ազատում ենք բոլոր չարագործ ազնվականների
և կաշառակեր դատավորների նշանակած տուր-
քերից և ծանրաբեռնություններից:

Ճորտությունից ազատվելու և հող տալու
խոստումը Պուգաչովի դրոշակի տակ հավաքեց
ճորտության մեջ տառապող հազարավոր գյու-
ղացիներ: Այդ ժամանակ կառավարությունը
սաստիկ անհանգստացավ և ահազին գորք ուղար-
կեց ապստամբած գյուղացիների դեմ, սակայն
ամբողջ յերկու տարի չկարողացան ճնշել Պու-
գաչովին, նույնիսկ նա մի քանի անգամ շար-
դեց բազմաթիվ վաշտեր և տիրեց միջանի քա-
ղաքներ (Աստրախան, Ցարիցին և այլ): Շատ
ազնվականներ կողոպտվեցան ապստամբած ժո-
ղովրդի ձեռքից: Պուգաչովյան խռովությունները
ցնցեցին պետությունը վերևից մինչև ներքև:
Նա աչքի յեր ընկնում խիստ զազանությամբ և
մարդկանց շտեմնված կոտորածով: Մկզբում Պու-
գաչովի հրոսակախմբերը վառում, կոտորում,
կախում եյին գյուղացիներին հակառակ գնա-
ցողներին: Հետո, յերբ Պուգաչովը հաղթվեց,
կառավարական զորքերը անխնա կոտորեցին
բոլոր կողակներին: Բանտերն այնքան լիքն եյին,
վոր բանտարկվածները մեռնում եյին նեղվածքու-
թյունից և քաղցից: Հազարավոր գյուղացիներ
տաժանակիր աշխատանքների և աքսորի ուղար-

կվեցան, և յեթե մեկը փոքր ինչ դիմադրու-
թյուն էր ցույց տալիս՝ տեղն ու տեղը սպա-
նում եյին: Կալվածատերերն ոգնում եյին կա-
ռավարությանը և կասկածելի ճորտերին հանձ-
նում եյին նրանց՝ խնդրելով պատժել մտրակով
և ականջները կտրելով: Պուգաչինը այդ առիթով
ասում է. «Այս կոտորածը սոսկալի յեր. միջա-
նիստներին ցցերի վրա եյին նստեցնում, մլուս-
ներին կողերից կախում եյին կաշթերից. նրանց
եյ նախ կտրտում եյին ձեռքերն ու վոտները և
հետո գլխատում, մնացածներին ներում եյին՝
կտրելով քիթը ու ականջները»:

Պուգաչովն էլ գլխատվեց Մոսկվայում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

1. Ֆրանսիական գյուղացիների ապստամբությունը 3
 2. Թագավորն ու ժողովուրդը 10
 3. Ստեփան Ռազին , 20
 4. Պուգաչովյան ապստամբությունը 35
-

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

« Ազգային գրադարան »



NL0182967



ԳԻՆԸ 10 ԿՈՊ.